ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 234-Ա

2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-ԻՆ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՎՈՎ 13 ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 14.08.2024 թվականի թիվ 123-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում ս/թ օգոստոսի 17-ին կազմակերպվող Խաղողօրհնեքի տոնական միջոցառման շրջանակներում Աղավնաձոր բնակավայրի թվով 14 տաղավարների ձևավորման և հյուրասիրության կազմակերպման համար հատկացնել 40.000-ական ՀՀ դրամ գումար յուրաքանչյուր սեղանին՝ այն անկանխիկ եղանակով փոխանցելով սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ որպես ներկայացուցիչների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**